ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ՔԾԽ ՀՄԱԱՊՁԲ - 09

ք. Երևան «13» 03 2018 թ.

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս խորհրդի աշխատակազմի ղեկավար Ս. Յազերյանի, որը գործում է խորհրդի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մագնատէս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում ՝ 895 700 (ութ հարյուր ինսուն հինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ք. Երևան Տերյան 89 Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն ՀՀ 900011522092 ՀՎՀՀ 01541632	Մագնատէս» ՍՊԸ ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470103134080000 ՀՎՀՀ 02258158
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«13» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՔԾԽ ՀՄԱՊՁԲ -09 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	18421130/1	ձեռնոցներ		Կենցաղային, ռետինե , L չափի	զույգ	350	7000	20	ք.Երևան, Տերյան 89	20	2-րդ եռամսյակ
2	19641000/1	պոլիէթիլենային պարկ, աղբի համար		Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար, 30 լ տարողությամբ	հատ	10	10000	1000	ք.Երևան, Տերյան 89	1000	850 հատը 2-րդ եռամսյակ, 150 հատը*** 3-րդ եռամսյակ
3	24951130/1	սիլիկոնե քսուկներ		Մոդիֆիկացված բիտումի հիմքով պլաստիկ հերմետիկ՝ նախատեսված մակերևույթների պրոֆեսիոնալ վերանորոգման, հերմետիկացման և սոսնձման համար: Նախատեսված տանիքների մետաղական թիթեղների ճեղքերը լցնելու համար: Փաթեթավորումը՝ 300 մլ	հատ	1700	17000	10	ք.Երևան, Տերյան 89	10	3-րդ *** եռամսյակ
4	31441000/1	մարտկոց, AAA տեսակի		Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով	հատ	100	2000	20	ք.Երևան, Տերյան 89	20	4-րդ*** եռամսյակ
5	31442000/1	մարտկոց, AA տեսակի		Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ	հատ	100	5000	50	ք.Երևան, Տերյան 89	50	1- ին եռամսյակ

				տարվա պիտանելիության ժամկետով							
6	31531210/1	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W		Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	100	20000	200	ք.Երևան, Տերյան 89	200	150 հատը 2-րդ եռամսյակ, 50 հատը*** 3-րդ եռամսյակ
7	31531500/1	ցերեկային լամպ 60սմ		Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 60 սմ երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված 'Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի'	հատ	400	12000	30	ք.Երևան, Տերյան 89	30	2-րդ եռամսյակ
8	31531600/1	ցերեկային լամպ 120սմ		Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U- ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 120 սմ՝: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"	հատ	500	5000	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
9	31531710/1	լամպերի դրոսելներ		Լամպերի դրոսելներ նախատեսված 4 հատանոց ցերեկային լամպերի համար, 40W, 220V, 0.42A 50HZ հզորությամբ	հատ	2700	27000	10	ք.Երևան, Տերյան 89	10	3-րդ*** եռամսյակ
10	31684100/1	վարդակ		220 Վ լարման, 16 Ա	հատ	500	5000	10	ք.Երևան,	10	2-րդ

		երկբևեռանի		հզորության, երկու միացման և հողանցման լատունե զսպանակավորված կոնտակտներով, արտաքին դետալները՝ կարբոնապլաստմասսայեե, ներքին մոնտաժի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի					Տերյան 89		եռամսյակ
11	31685000/1	էլեկտրական երկարացման լար		Չափսը: 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"	հատ	1700	10200	6	ք.Երևան, Տերյան 89	6	3-րդ*** եռամսյակ
12	31686000/1	խրոց սովորական		Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75	հատ	250	2500	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
13	33761000/1	զուգարանի թուղթ, ռուլոնով		Երկշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006	հատ	100	182000	1820	ք.Երևան, Տերյան 89	1820	516 հատ 1-ին եռամսյակ 825 հատ*** 3-րդ եռամսյակ 479 հատ***

				թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”							4-րդ եռամսյակ
14	39221340/1	մեկանգամյա օգտագործման դանակներ և ափսեներ		Մեկանգամյա օգտագործման պլաստմասե դանակներ և ափսեներ, սպիտակ գույնի: Ափսեների տրամագիծը 20 սմ, խորությունը 2սմ, դանակների երկարությունը 16սմ: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված “Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի	հատ	30	9000	300	ք.Երևան, Տերյան 89	300	100 հատ 2-րդ եռամսյակ 200 հատ*** 4-րդ եռամսյակ
15	39221350/1	մեկանգամյա օգտագործման բաժակներ		Մեկանգամյա օգտագործման բաժակներ պլաստմասսայե, մեծ չափի, բարձրությունը 8սմ, տրամագիծը՝ ներքևում 4.5 սմ, վերևում 7սմ, սպիտակ գույնի: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված “Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի”	հատ	10	22000	2200	ք.Երևան, Տերյան 89	2200	200 հատ 1-ին եռամսյակ 1000 հատ 2-րդ եռամսյակ 1000 հատ*** 3-րդ եռամսյակ
16	39241210/1	մկրատ գրասենյակային		մկրատ գրասենյակային 17սմ, պլաստմասե բռնակով	հատ	1000	5000	5	ք.Երևան, Տերյան 89	5	1-ին եռամսյակ
17	39513200/1	թղթե անձեռոցիկ, երկշերտ		Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 70 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Սելպակ(Selpak) կամ համարժեք: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006	հատ	400	16000	40	ք.Երևան, Տերյան 89	40	20 հատ 2-րդ եռամսյակ 20 հատ*** 3-րդ եռամսյակ

				թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":							
18	39513200/2	թղթե անձեռոցիկ, երկշերտ		Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"	հատ	110	44000	400	ք.Երևան, Տերյան 89	400	80 հատ 1-ին եռամսյակ 120 հատ 2-րդ եռամսյակ 200 հատ*** 4-րդ եռամսյակ
19	39522250/1	փոշու հավաքման կտորներ		Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից	հատ	100	5000	50	ք.Երևան, Տերյան 89	100	1-ին եռամսյակ
20	39811300/1	հոտազերծիչ, օդի		Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, տարբեր բուրմունքներով	հատ	400	4000	10	ք.Երևան, Տերյան 89	10	3-րդ*** եռամսյակ
21	39812410/1	կահույքի փայլեցման միջոց		Հատուկ հեղուկ, կահույքը փայլեցնելու համար	հատ	600	6000	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
22	39831241/1	օճառ, ձեռքի		Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի	հատ	300	6000	20	ք.Երևան, Տերյան 89	20	1-ին եռամսյակ

				համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտա-դրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը:							
23	39831245/1	օճառ, հեղուկ		Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5 %-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ^3-ից, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված <<Մակե-րևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի>>	լիտր	550	27500	50	ք.Երևան, Տեիյան 89	50	10 լիտր 1-ին եռամսյակ 40 լիտր 2-րդ եռամսյակ
24	39831247/1	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)		Հատուկ ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	հատ	500	6000	12	ք.Երևան, Տերյան 89	12	2-րդ եռամսյակ
25	39831272/1	սպունգ, աման լվանալու		Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ,	հատ	100	1400	14	ք.Երևան, Տերյան	14	2-րդ եռամսյակ

				հաստությունը.25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով:					89		
26	39831276/1	զուգարանների մաքրման նյութեր		Զուգարանների մաքրման համար նախատեսված նյութեր	հատ	900	22500	25	ք.Երևան, Տերյան 89	25	2-րդ եռամսյակ
27	39831280/1	ապակի մաքրելու միջոց		Հատուկ հեղուկ նախատեսված ապակիներ մաքրելու համար, հակաալերգիկ	հատ	800	8000	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
28	39831282/1	կահույքի մաքրելու լաթ		Փափուկ լաթ նախատեսված կահույք մաքրելու համար	հատ	250	5000	20	ք.Երևան, Տերյան 89	20	2-րդ եռամսյակ
29	39831283/1	հատակի լվացման լաթ		Փափուկ լաթ նախատեսված հատակ մաքրելու համար	հատ	700	21000	30	ք.Երևան, Տերյան 89	30	2-րդ եռամսյակ
30	39831284/1	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)		Հատակ մաքրելու համար նախատեսված հեղուկ (խտանյութ)	հատ	500	5000	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
31	39836000/1	ավել, սովորական		Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ:	հատ	800	8000	10	ք.Երևան, Տերյան 89	10	2-րդ եռամսյակ
32	44112250/1	տանիքի նյութեր		Մածիկային տանիքանյութեր պոլիմերներով մոդիֆիկացված բիտումային և ձյութի մածիկների խառնուրդ՝ նախատեսված որպես պաշտպանիչ շերտ մետաղական, փայտյա և պլաստիկ մակերեսների համար:	հատ	1500	6000	4	ք.Երևան, Տերյան 89	4	4-րդ* եռամսյակ
33	44118000/1	թիթեղ, ցինկապատ, մետաղական, պողպատյա		թիթեղ, ցինկապատ, մետաղական, պողպատյա, նախատեսված տանիքների համար, ԳՈՍ — EN 10346-DX51D,EN10143, թիթեղի հաստությունը 0.60 մմ, պրոֆիլային լայնությունը 900մմ, մոնտաժային լայնությունը 800մմ, ալիքի բարձրությունը 60մմ, երկարությունը 2 մ, 1ք/մ տեսակ. կշիռ — 6.452	մ2	6800	285600	42	ք.Երևան, Տերյան 89	42	4-րդ*** եռամսյակ
34	44163172/1	ռետինե խողովակ 2, 3/4"		Կանաչապատ տարածքները ոռոգելու համար, 3/4"- չափի, ռետինե:	մետր	700	35000	50	ք.Երևան, Տերյան 89	50	3-րդ*** եռամսյակ

35	44411110/1	ջրի ծորակ, փական		Տարբեր չափերի, խառնիչային տիպի:	հատ	6000	18000	3	ք.Երևան, Տերյան 89	3	2-րդ եռամսյակ
36	44521120/1	դռան փականներ		Նախատեսված մուտքի դռան համար ամուր մետաղից, արծաթագույն, բարձրությունը 26սմ	հատ	5000	10000	2	ք.Երևան, Տերյան 89	2	2-րդ եռամսյակ
37	44621130/1	կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ ի մասեր		Նախատեսված ջեռուցման համակարգի ռադիատորի մասեր / փականներ, միջնորմներ, դրանց հետ կապված այլ մասեր:	հատ	1500	15000	10	ք.Երևան, Տերյան 89	10	4-րդ*** եռամսյակ

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան դրվալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Ապրանքները կմատակարարվեն «Գնորդի» կողմից առաջին իսկ պահանջի դեպքում*

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103134080000
ՀՎՀՀ 02258158

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«13» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՔԾԽ ՀՄԱՊՁԲ - 09 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18421130/1	ձեռնոցներ	-	-	-	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	**7 000**
2	19641000/1	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	-	-	-	8500	8500	8500	10000	10000	10000	10000	10000	10000	**10 000**
3	24951130/1	սիլիկոնե քսուկներ	-	-	-	-	-	-	17000	17000	17000	17000	17000	17000	**17 000**
4	31441000/1	մարտկոց, AAA տեսակի	-	-	-	-	-	-	-	-	-	2000	2000	2000	**2 000**
5	31442000/1	մարտկոց, AA տեսակի	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
6	31531210/1	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	-	-	-	15000	15000	15000	20000	20000	20000	20000	20000	20000	**20 000**
7	31531500/1	ցերեկային լամպ 60սմ	-	-	-	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	**12 000**
8	31531600/1	ցերեկային լամպ 120սմ	-	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
9	31531710/1	լամպերի դրոսելներ	-	-	-	-	-	-	27000	27000	27000	27000	27000	27000	**27 000**
10	31684100/1	վարդակ երկբևեռանի	-	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
11	31685000/1	էլեկտրական երկարացման լար	-	-	-	-	-	-	10200	10200	10200	10200	10200	10200	**10 200**

12	31686000/1	խրոց սովորական	-	-	-	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	**2 500**
13	33761000/1	զուգարանի թուղթ, ռուլոնով	-	-	51600	51600	51600	51600	139100	139100	139100	182000	182000	182000	**182 000**
14	39221340/1	մեկանգամյա օգտագործման դանակներ և ափսեներ	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	9000	9000	9000	**9 000**
15	39221350/1	մեկանգամյա օգտագործման բաժակներ	-	-	2000	12000	12000	12000	22000	22000	22000	22000	22000	22000	**22 000**
16	39241210/1	մկրատ գրասենյակային	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
17	39513200/1	թղթե անձեռոցիկ, երկշերտ	-	-	-	8000	8000	8000	16000	16000	16000	16000	16000	16000	**16 000**
18	39513200/2	թղթե անձեռոցիկ, երկշերտ	-	-	8800	22000	22000	22000	44000	44000	44000	44000	44000	44000	**44 000**
19	39522250/1	փոշու հավաքման կտորներ	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
20	39811300/1	հոտազերծիչ, օդի	-	-	-	-	-	-	4000	4000	4000	4000	4000	4000	**4 000**
21	39812410/1	կահույքի փայլեցման միջոց	-	-	-	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	**6 000**
22	39831241/1	օճառ, ձեռքի	-	-	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	**6 000**
23	39831245/1	օճառ, հեղուկ	-	-	5500	27500	27500	27500	27500	27500	27500	27500	27500	27500	**27 500**
24	39831247/1	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	-	-	-	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	**6 000**
25	39831272/1	սպունգ, ասան լվանալու	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	**1 400**
26	39831276/1	զուգարանների մաքրման նյութեր	-	-	-	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	**22 500**
27	39831280/1	ապակի մաքրելու միջոց	-	-	-	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	**8 000**
28	39831282/1	կահույքի մաքրելու լաթ	-	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**

29	39831283/1	հատակի լվացման լաթ	-	-	-	21000	21000	21000	21000	21000	21000	21000	21000	21000	**21 000**
30	39831284/1	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	-	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5 000**
31	39836000/1	ավել, սովորական	-	-	-	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	**8 000**
32	44112250/1	տանիքի նյութեր	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000	**6 000**
33	44118000/1	թիթեղ, ցինկապատ, մետաղական, պողպատյա	-	-	-	-	-	-	-	-	-	285600	285600	285600	**285 600**
34	44163172/1	ռետինե խողովակ 2, 3/4"	-	-	-	-	-	-	35000	35000	35000	35000	35000	35000	**35 000**
35	44411110/1	ջրի ծորակ, փական	-	-	-	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	**18 000**
36	44521120/1	դռան փականներ	-	-	-	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	**10 000**
37	44621130/1	կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	-	-	-	-	-	-	-	-	-	15000	15000	15000	**15 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀԿՀՀ 01541632

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103134080000
ՀԿՀՀ 02258158

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2018 թ. կնքված
ՀՀ ՔԾԽ ՀՄԱՊՁԲ - 09 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » _____ 2018թ.
Պայմանագրի/այսուհետ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ՔԾԽ աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա. Ավետիսյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2018թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

.

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.								

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018 թ. կնքված
ՀՀ ՔԾԽ ՀՄԱԱՊՁԲ - 09 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն